



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



Վարագայ Սուրբ Խաչ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Հայաստան-Թուրքիա	Էջ 2
Ընտրուած	Էջ 5
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳՐՔԷՆ (3.18-26)

Իմաստուլթիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կռթնին՝ որպէս Տիրոջ: Իր իմաստուլթեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր հանճարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն:

Որդեակ, իմաստուլթենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներուս եւ խորհուրդներուս

... խրատներուս եւ խորհուրդներուս հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս...

հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս, շնորհքներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգըստանան: Որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս,

առանց երբեք գայթելու. ցերեկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր նինջով քնանաս: Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (65.22-25)

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս զուր տեղ պիտի չ'աշխատին ու դժբախտ զաւակներ պիտի չ'ծնին, որովհետեւ Աստուծմէ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան, թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց զաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ գիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. «Ի՞նչ կ'ուզէք»: Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եզան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չդպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լեռանս վրայ», կ'ըսէ Տէրը:

Իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (6.14-18)

Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ

աշխարհին համար: Կարեւորը մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը է, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող գիտ չենդէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՆՍԻ
(24.30-36)**

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի զրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի
նօսքը
Հ Ա Յ Ա Ս Ա Ն - Թ Ո Ւ Բ Ե Ի Ա
ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆԵՐՈՒՄ ԱՄԱՐԱ

Հ Ա Մ Ա Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն
ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐՆԵՐԸ
Հ Ա Մ Ա Ձ Գ Ա Յ Ի ' Ն
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ՀԱՐԿ Է
ԴԻՄԱԳՐԱԲԵԼ

Հայաստան-Թուրքիա կապերու ծիրէն ներս արձանագրուած վերջին զարգացումները, յատկապէս քաղաքական-դիւանագիտական մակարդակներու վրայ տեղի ունենալիք յառաջիկայ բանակցութիւնները՝ Զրւի-ցերիոյ միջնորդութեամբ գոյացած համաձայնագիրերու հիման վրայ, արդար ընդվզումի ալիք մը սկսած են բարձրացնել թէ՛ Հայաստանի ժողովրդային շրջանակներէն ներս, եւ թէ Սփիւռքի մէջ: Այս կացութեան դիմաց անհրաժեշտ է խոհեմ, իրապաշտ ու շրջահայեաց մօտեցում որդեգրել՝ հետու մնալով զգացական պոռթկումներէ եւ ժամանակաւոր շահեր ապահովելու վատառողջ մտածելակերպերէ ու գործելակերպերէ: Զեմք ուզեր անդրադառնալ վերոնշեալ համաձայնագիրերու երկդիմի, անորոշ ու վտանգալից պարունակութեան: Սակայն, կ'ուզեմք հետեւեալ կէտերուն շուրջ հրաւիրել Հայաստանի իշխանութեան, մեր ժողովուրդի կեանքէն ներս գործող կազմակերպութիւններուն եւ մեր ժողովուրդի զաւակներուն ազնիւ ուշադրութիւնը.-

Ա) Հայաստանին միայն առնչուած

խնդիրներու ֆննարկումը եւ այդ գծով առնուելիք որոշումները բնականաբար կը վերաբերի Հայաստանի պետութեան: Սակայն, համահայկական բնոյթ ունեցող հիմնահարցերը անհրաժեշտ է որ համահայկակա՛ն մաշտապով ու մասնակցութեամբ լուրջ ֆննարկումի ենթարկուին: Նման խնդիրներուն ու մարտահրաւերներուն մեր մօտեցումը պէտք է մեկնի համազգային գերագոյն շահերէն ու մեր ներքին միասնականութիւնը ամուր պահելու նախանձախնդրութենէն: Յարափոփոխ պայմաններու յարաբերաբար մարտավարական հաշուարկներէ ու տնտեսաֆաղափական անմիջական շահերէ անդին, եթէ մեր ազգը յուզող հիմնահարցերուն նկատմամբ Հայաստանի, Ղարաբաղի ու Սփիւռքի ամբողջական մասնակցութեամբ հաւաքական մօտեցումներ չնշդուին, մեր ազգի կեանքէն ներս անվստահելիութեան մթնոլորտ մը կրնայ ստեղծուիլ, ներքին բեւեռացումներ կրնան յառաջանալ ու նոր տագնապներու դիմաց կրնանք գտնուիլ: Այս վտանգալից կացութեան նախանշանները սկսած են երեւելի դառնալ: Հետեւաբար, բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ կ'ուզենք Մեր այս խոր մտահոգութիւնը փոխանցել Հայաստանի, Ղարաբաղի եւ Սփիւռքի մեր պետական, ֆաղափական ու համայնֆային պատասխանատուներուն եւ մեր ժողովուրդի զաւակներուն:

Բ) Այսօր մեր ժողովուրդին դիմաց, որպէս առաջնահերթ մտահոգութիւն ունինք երկու հիմնահարցեր՝ Ղարաբաղի եւ ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման հարցերը: Հայաստանի ապահովութիւնն ու յիշեալ հարցերու հետապնդումը պէտք է դիտուի մէ՛կ ամբողջութեան ծիրէն ներս, երբեմն մէկը շեշտելով, երբեմն միւսը՝ շրջանային ու միջազգային ֆաղափական պայմաններու հոլովոյթին համաձայն: Սակայն, յիշեալ հարցերու իրարմէ անջատումը, մէկուն շեշտաւորումը ի հեճուկս միւսին կամ մէկուն անտեսումը ի շահ միւսին՝ վնասաբեր ֆաղափականութիւն է համազգային գերագոյն շահերու տեսանկիւնէն դիտած:

Գ) Յանախակի առիթներով Հայաստանի թէ Սփիւռքի մեր ֆաղափական պատասխանատուներուն հետ զրոյցի ընթացքին, Մեր հրապարակային արտայայտութիւններուն ու հրատարակութիւններուն մէջ յատուկ կարեւորութեամբ յիշեցուցած ենք, թէ ցեղասպանութեան հետապնդումի աշխատանքներուն մէջ բացակայ է գործի ներդաշնակումն ու մանաւանդ տեղեկութիւններու փոխանակումը: Այլ խօսքով՝ Հայաստանի պետութիւնը իր նամբով կ'արծարծէ ցեղասպանութեան հարցը, երբեմն իր արտաքին ֆաղափականութեան ծիրէն ներս գայն վերածելով առաջնահերթ խնդիրի ու երբեմն լուսանցֆային հարցի: Սփիւռքի մէջ Հայ Դատի մարմինները եւ կուսակցութիւնները առանձնաբար կը հետապնդեն ցեղասպանութեան հարցը՝ իւրաքանչիւրը իրեն յատուկ գործելակերպով: Նաեւ եկեղեցին, իր կարգին, անջատաբար միւսներէն յատուկ աշխատանք կը կատարէ այս ուղղութեամբ: Ահա ա՛յս է մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման աշխատանքին պարզած ընդհանուր կացութիւնը, ուր փաստօրէն չկայ դերերու յստակեցում ու բաժանում, ինչպէս նաեւ հանգրուանային մօտեցումով թիրախներ նուանելու ծրագրում: Եւ բնականաբար, այս կացութիւնը ո՛չ միայն կը դանդաղեցնէ Հայ Դատի հետապնդման լայնածաւալ աշխատանքները, այլ նաեւ կը յառաջացնէ խաչածեւում, կրկնութիւն եւ երբեմն՝ նոյնիսկ հակասութիւն: Արդ, անհրաժեշտ է շրջել այս իրավիճակը:

Դ) Ցեղասպանութեան հարցը չափազանցօրէն զգայուն հարց մըն է մեր ժողովուրդին համար: Չմոռնանք որ Սփիւռքը պարտադրեալ գոյավիճակ մըն է. անոր գոյաւորումը ցեղասպանութեան արդիւնք է: Սակայն ցեղասպանութիւնը ամբողջ հայութեան եւ իւրաքանչի՛ւր հայուն հարցն է: Եւ աւելի՛ն, ֆաղափական սովորական օրակարգ մը չէ ցեղասպանութիւնը. ան անֆակտելիօրէն ընդելուզուած է հայուն ապրումներուն ու տագնապներուն, կազմաւորման ու գոյապայքարին: Ցեղասպանութիւնը սոսկ նահատակներու

յիշատակումի վերածելը բացարձակօրէն անընդունելի է: Ցեղասպանութեան նանա-չումը ու հատուցումը մեր ազգային պահանջատիրութեան առանցքներէն մէկն է: Հետեւաբար, ծայրայեղ աստիճանի զգուշաւորութեամբ ու զգայնութեամբ հարկ է մօտենալ այս հարցին: Բնականաբար, Հայաստանը որպէս պետութիւն տարբեր մօտեցում պէտք է ունենայ ցեղասպանութեան նանաչման ու ընդհանրապէս մեր ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռքբերման գործընթացին՝ բոլոր պարագաներուն առանց ցեղասպանութիւնը բանակցութեան նիւթի վերածելու: Սակայն, Սփիւռքի ու Հայաստանի տարբեր մօտեցումները ու շեշտաւորումները պէտք է զիրար ամբողջացնեն ու զօրացնեն՝ երբեմն Հայաստանը օգտագործելով Սփիւռքի խիստ ու անզիջող կեցուածքը, եւ երբեմն Սփիւռքը ձգելով որ Հայաստանը դիւանագիտական կերպերով հետապնդէ մեր ազգային պահանջատիրութիւնը միջպետական յարաբերութեանց շրջագիծէն ներս:

Ե) Սակայն, զգո՛յշ, պէտք է թուրքիոյ առիթ տալ միջազգային համայնքին ըսելու թէ՛ Սփիւռքը խանգարիչ դեր կը կատարէ (արդէն իսկ թուրքիան զանազան ձեւերով կը փորձէ լռեցնել Սփիւռքի պահանջատիրական ձայնը), բայց կարելի է համաձայնութիւն գոյացնել Հայաստանի հետ: Պէտք է ցեղասպանին առիթ տալ զանազան միջոցներով մոռացութեան ֆօդին տակ պահելու մէկուկէս միլիոն հայերու ջարդը: Արդարեւ, այսօր թուրքիոյ համար ոսկի առիթ է նման ֆայլի դիմելու՝ երբ ան կը վայելէ ամբողջական աջակցութիւնը Արեւմուտքին, երբ ան Միջին Արեւելքի գլխաւոր դերակատարներէն մէկը դարձած է, երբ ան «բարի վարուց» վկայագիրներ կը փնտռէ Եւրոպա մուտք գործելու, երբ ան շրջանի որոշ երկիրներու միջեւ միջնորդի դեր սկսած է կատարել, երբ Արեւմուտքը թուրքիոյ սկսած է վստահիլ շրջանէն ներս ապահովութիւն ու խաղաղութիւն հաստատելու յոյժ կարեւոր առաքելութիւնը:

Զ) Այս կացութեան դիմաց հարկ է ըլլալ արթուն ու հեռատես եւ չտարուիլ

կարգ մը պետութիւններու ցուցաբերած շահադիտական զօրակցութենէն: Ճի՛շդ է, ֆաղափականութեան մէջ հարկ է նաեւ ըլլալ իրապաշտ. սակայն, դարձեալ ու մի՛շտ զգո՛յշ, իրապաշտութիւնը կրնայ ստեղծել ազգային իմաստով աղիտալի ու անդարմանելի կացութիւններ: Հայաստանը չի կրնար աշխարհին ներկայանալ որպէս իր դրացիին նկատմամբ յաւիտենական թշնամութիւն սերմանող եւ ժողովուրդներու միջեւ բարի դրացնութեան ու փոխադարձ հասկացողութեան հակառակող ժողովուրդու պետութիւն: Միւս կողմէն, ցեղասպանութեան ու Ղարաբաղի գծով թուրքիոյ յարձակողապաշտ դիւանագիտութեան դիմաց Հայաստանի լռութիւնը կրնայ, ներքին թէ արտաքին նկատներու վրայ, տեսակ-տեսակ մեկնաբանութիւններու դուռ բանալ: Արդարեւ, ջարդ ու ախոր տեսած հայութիւնը երբե՛ք, երբե՛ք պիտի չուզէ տեսնել Հայաստանի իշխանութիւնը՝ աշխարհափառափական տուեալներէ մեկնելով եւ ֆաղափական ու սնտեսական շահերու սիրոյն ցեղասպանութեան ու համազգային ունէ՛հիմնահարցի շուրջ զիջումներ կատարելու ընթացքին մէջ: Նման տպաւորութիւնն իսկ մեր ժողովուրդի կեանքէն ներս խոր վերք մը կրնայ յառաջացնել:

Ե) Արդարեւ, միջազգային համայնքին զօրակցութեամբ թուրքիոյ կողմէ ականուած դաշտ մը մուտք կը գործէ Հայաստան: Ամէն բանէ առաջ հարկ է հեռու մնալ Հայաստանը տկարացնող փորձերէ: Հայաստանը բանակցութիւններուն պէտք է ներկայանայ զօրեղ, ինքնավստահ ու պահանջատէր: Արդ, առաջին, Մեր կարծիքով, սկսելիք բանակցութիւնները ի յառաջագունէ մերժելը հեռատես ֆաղափականութիւն մը չէ: Նման մօտեցում հեշտ կերպով պիտի չդիտուի միջազգային համայնքին կողմէ (թող թուրքիա՛ն դիմէ նման ֆայլի): Երկու երկիրներու միջեւ առանց պայմանի դիւանագիտական յարաբերութիւնները նշդելու միտող բանակցութիւններուն հարկ է մասնակցիլ՝ միշտ յիշեցնելով թուրքիոյ եւ միջազգային համայնքին թէ հայ ժողովուրդը կը մնայ պահանջատէր իր արդար դատին:

Երկրորդ, որպէսզի կարելի ըլլայ վանել մեր ժողովուրդի զաւակներուն մտքին մէջ արմատացած մտավայխութիւնը, անհրաժեշտ է որ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Սերժ Սարգսեան հայ ժողովուրդին վստահեցնէ թէ բոլոր պարագաներուն ցեղասպանութիւնը բանակցութեան նիւթ չի կրնար ըլլալ եւ թէ հայութիւնը կը մնայ պահանջատէր իր իրաւունքներուն: Նաեւ անհրաժեշտ է որ ներքին խորհրդակցութիւններու ճամբով յիշեալ գործընթացին մասնակից դառնան թէ՛ Հայաստանի, թէ՛ Ղարաբաղի եւ թէ՛ Սփիւռքի պատասխանատու կառոյցները: Եւ երրորդ, երբ բանակցութիւնները հասնին այն կէտին, ուր ցեղասպանութեան հարցը կը սկսի արծարծուիլ կամ հարկ է արծարծել, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՅՍՏԱԿՕՐԷՆ ԵՒ ԱՄԲՈՂՁ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԸՍԵՆ՝ ԹԷ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ Է, ԱՆՈՐ ՇՈՒՐՁ ԿԸ ՄԵՐԺԵՆՔ ԲԱՆԱԿՑԻԼ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ ՈՐ ԹՈՒՐՔԻԱՆ ՃԱՆՉՆԱՅ ԻՐ ԳՈՐԾԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ: Ա՛յս կը սպասեն թրքական եաթաղանին գոհ մեր մէկուկէս միլիոն նահատակները: Ա՛յս կը սպասէ իր նահատակներու սրբազան կտակին հաւատարիմ հայ ժողովուրդը: Արդարեւ, նահատակներու սրբազան կտակը եւ ժողովուրդին կամքը վեր են ամէն տեսակ ժամանակաւոր ու միակողմանի շահերէ: Պէտք չէ թոյլ տալ որ Թուրքիան այս բանակցութիւններու ճամբով անպատժելիութեան վկայագիր ստացած ըլլալու ինքնավստահութեամբ ներկայանայ միջազգային համայնքին: Ու թող աշխարհը իմանայ, եւ գիտէ՛, թէ արդարութեան ճամբով միայն կարելի է հաստատել բարի դրացնութիւն եւ փոխադարձ վստահութիւն ժողովուրդներու ու պետութիւններու միջեւ: Ուզեցիմք մեր ազգը տագնապեցնող վերոյիշեալ հիմնահարցին գծով Մեր տեսակէտը յստակօրէն պարզել մեր ժողովուրդի զաւակներուն, այն խոր հաւատով ու վստահութեամբ, որ բոլոր պայմաններուն

մէջ մեր ազգը, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, միշտ պիտի մնայ միակամ ու պահանջատէր՝ համախմբուած իր հայրենիքին եւ գերագոյն արժէքներուն ու ձգտումներուն շուրջ:

ՀԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՈՒԹԵԱՄ,
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2009
 Առաքիւն



ԸՆՏՐՈՒԿ

ՀԵՌԵԱԿ՝ ԳԵՐՄԻԿ Ք. Գ.

Այս յօդուածով կ'ուզեմ անդրադառնալ այն հարցին, թէ համաձայն Աստուածաշունչին ո՞վ է եւ որո՞նք են ընտրուածները: Կանխաւ ըսեմ, որ պիտի չխօսիմ Աստուծոյ ընտրեալ Քրիստոսի մասին, այլ անոնց՝ որոնք անոր ճամբուն մէջ կը համարուին:

Իր բառային ամենէն պարզ իմաստին մէջ, «ընտրուած» կը նշանակէ «զատուած»: Ընտրելով կը զատենք լաւը (եթէ ամենալաւը չկայ) կամ ամենալաւը (եթէ լաւագոյնը չկայ) կամ լաւագոյնը:

Ինչպէս բառարանային բացատրութեան մը մէջ գրուած է, «ընտրել» նաեւ կը նշանակէ «տարբերել» (Մալխասեան): Ընտրութիւններ կան՝ որոնք կը ձգտին տարբեր դարձնելու: Օրինակ՝ Աստուած ժողովուրդ մը կ'ընտրէ կամ «կը կանչէ», որպէսզի անիկա «Իր սուրբ ժողովուրդը» ըլլայ (Հմմտ Հո 1.7): Աստուծոյ հոգին է, որ զայն կը փոխակերպէ սուրբ ժողովուրդի:

Երբ Աստուածաշունչը կը կարդանք, կը տեսնենք որ Աստուած նախ մարդիկ կ'ընտրէ:

Առաջին ընտրուած մարդն է Նոյ: Ծնունդներու Գիրքին մէջ գրուած է. «Նոյ իր դարուն մարդոց մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր. Նոյ Աստուծոյ հետ քալեց» (Ծն 6.9):

Երկրորդն է՝ Աբրահամ: Ան Տիրոջ հաւատաց, որ իրեն համար «արդարութիւն

Նոյ
 Աստուծոյ
 հետ քալեց:

սեպուեցալ», կ'ըսէ Ծնունդներու Գիրքին դրուագը (Ծն 15.6):

Երրորդն է՝ Իսահակ, որ Քրիստոսի նախօրինակը համարուած է: Քրիստոս է կատարեալ արդարը: Հետեւաբար, անոր նախօ-րինակն է Իսահակ:

Աստուած գանձնիք ընտրած էր, որովհետեւ արդար էին:

Այս ընտրութիւնները բաւարար են ըսելու, թէ Աստուած զանոնք ընտրած էր, որովհետեւ արդար էին: Եւ ո՛չ թէ՛ որովհետեւ շատ խելացի էին, կամ շատ դրամ ունէին, եւ մեծ կամ պզտիկ իշխանութիւն ունէին:

Ուրեմն, Աստուծոյ կողմէ ընտրուելը կ'ենթադրէ նախ եւ առաջ հոգեւոր ու Աստուծահաճոյ ընթացք (= արդար ըլլալ): Եւ երկրորդ՝ ան որ այդ ընթացքին մէջ է, ունի նաեւ շնորհքը Աստուծոյ կամքին կատարման յանձնառութիւն վերցնելու, այլ խօսքով՝ ուխտով մը Աստուծոյ կապուած ըլլալու:

Այստեղ կրնայ հարց ծագիլ:

Պողոս առաքեալ նախքան իր դարձը՝ կը հալածէր քրիստոնեաները: Եւ յանկարծ Դամասկոսի ճամբուն վրայ անակնկալ հոգեփոխութիւն մը ապրեցաւ: Ան Աստուծահաճոյ ընթացքի մէջ չէր, բայց Աստուած զինք ընտրեց: Ինչպէ՞ս հասկնալ այս ընտրութիւնը:

Աստուծոյ ընտրութեան մասին Պողոս առաքեալ գրած է. «Իր ծրագիրը կը հիմնուի ազատ ընտրութեան վրայ» (Հռ 9.12): Ասիկա չի նշանակեր, թէ Աստուած ամէն անգամ նոր ընտրութիւն կ'ընէ՝ իր ծրագիրը իրագործելու համար: Ան փոփոխամիտ կամ քմահաճ ընտրող մը չէ: Աստուած հաւատարիմ է իրեն հաւատարիմներուն հետ: Եւ այս հաւատարմութիւնը շա՛տ երկար համբերութիւն ունի: Առաքեալը գրած է. «Եթէ նոյնիսկ մենք հաւատարիմ չմնանք՝ ինք հաւատարիմ կը մնայ, որովհետեւ չի կրնար ինքզինքին հակասել» (Բ. Տմ 2.13):

Թող ներուի հարցումը դարձեալ դնել. ինչպէ՞ս հասկնալ Պողոս առաքեալի ընտրուելը: Երեք պատասխաններ կարելի է տալ.

ա.- Կա՛մ Աստուած զայն ընտրած էր՝ անոր ապագայ արդարութեան համար.

բ.- Կա՛մ ընտրած էր՝ որովհետեւ անոր ներքին անձին մէջ ծածկաբար հոգեբանական եւ հոգեւոր պատրաստութիւնը կար. եւ

գ.- Կա՛մ ալ զայն ընտրած էր յիշեալ երկու պատճառներով:

Սակայն ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ կողմէ ընտրուած ըլլալ:

Ընտրուած ըլլալը երբեք ըսել չէ, թէ անձը «ես փրկուած եմ» ըսելով ման պիտի գայ, այլ

- Պիտի ջանայ «Աստուծոյ աչքին

ընտիր ըլլալ, այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար ամէնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը» (Բ. Տմ 2.15):

- Հեռու պիտի կենայ «հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն» (նոյն, 16): Եւ

- Հետամուտ պիտի ըլլայ արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ու սրբութեան (նոյն, 22):

Յօդուածիս երկրորդ բաժնով կ'ուզեմ անդրադառնալ Աստուծոյ կողմէ հաւաքա-կանութիւններու ընտրութեան: Անշուշտ ինչ որ ըսուեցաւ անհատի ընտրութեան պարագային նոյնը նաեւ իմանալի է հաւաքանութիւններու ընտրութեան պարագային:

Յաճախ մարդիկ գայթակղած քովս եկած են եւ ըսած՝ որ Աստուծաշունչը ցեղապաշտ մատեան մըն է: Եւ ինծի հարց տուած, թէ ինչո՞ւ Աստուած երբայցի ժողովուրդը ընտրած է, փոխանակ ընտրելու ուրիշ ժողովուրդ մը, կամ՝ ուրիշ ժողովուրդներ, կամ՝ համայն մարդկութիւնը: Ս. Գիրքին Աստուածը խտրական հոգի ունի, ըսած են:

Բայց այս եւ բոլոր այլ արտայայտութիւններ արդիւնք են Ս. Գիրքի տառապաշտ ընկալումին: Ըստ իս, հիմնական բանը որ պէտք է տեսնել սա է: Ինչպէ՞ս է, որ Ս. Գիրքը այսքան լայն տարածում գտած է: Եթէ անիկա մարդկային կեանքի հոգեբանական եւ հոգեւոր խորունկ կարիքները չգոհացնէր՝ այսքան տարածուած պիտի չըլլար, իսկ եթէ տարածուած է,

ապա ուրեմն՝ գոհացուցած է եւ կը գոհացնէ: Արդ, Ս. Գիրքի տառապաշտ ընկալումէն

Ընտրուած ըլլալը երբեք ըսել չէ, թէ անձը «ես փրկուած եմ» ըսելով ման պիտի գայ...

Ս. Գիրքը էպպէս անդրցեղային է:

անդին է ճշմարտութիւնը:

Ս. Գիրքը էպաֆանդրոսեղային է: Անիկաառ Աստուած բացուած հոգիներուն մատեանն է, եւ հոն կը հանգչի յաւիտեանական լոյսը:

Ի՞նչ է պատճառը երբայեցի ժողովուրդի ընտրութեան:

Պարզ է, որ կրօնքի հոգեբանութիւն պիտի չընեմ այս նեղ սահմանին մէջ, այլ պիտի ցոյց տամ ամենէն հիմնական մի քանի կէտերը:

Բ. Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու հայրերդ սիրելուն համար՝ անոնցմէ ետքը անոնց սերունդը ընտրեց» (Բ. Օր 4.37): Ուրեմն, ըստ Մովսէս մարգարէի, երբայեցի ժողովուրդին ընտրութեան պատճառը՝ անոնց հայրերուն սիրուած ըլլալն է Աստուծոյ կողմէ:

Աստուծոյ սիրելը՝ նաեւ ընտրել է, եւ թէ՛ Աստուծոյ սէրը եւ ընտրութիւնը սերունդէ սերունդ կ'երթան:

Ակնարկուած հայրերն էին. Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ:

Հետեւաբար, Աստուծոյ սիրելը՝ նաեւ ընտրել է, եւ թէ՛ Աստուծոյ սէրը եւ ընտրութիւնը սերունդէ սերունդ կ'երթան:

Աստուած իրենց հայրերուն արդարութեան պատճառով կ'ընտրէ երբայեցի ժողովուրդը: Այդ ընտրութիւնը բովանդակութիւն եւ ուղղութիւն կու տայ, եւ յանձնառութիւն կը պահանջէ: Ընտրութիւնը ուխտով մը կը հաստատուի:

Ինչո՞ւ Աստուած երբայեցի ժողովուրդը ընտրելով՝ ուխտ կնքեց անոր հետ:

Որպէսզի անիկա Աստուծոյ ծրագրին ծառայէ:

Ի՞նչ էր Աստուծոյ ծրագիրը:

Բոլորին կամ համայն մարդկութեան փրկութիւնը:

Իսկ ի՞նչ պատահեցաւ, որ Աստուծոյ ծրագրին ծառայելու երբայեցի ժողովուրդին կոչումը ետ առնուեցաւ:

Անիկա չհասկցաւ, թէ Աստուած ի՞նչ ձեւով կ'ուզէր արդարացնել մարդիկը: Արդարանալու իր հասկցած ձեւին կառչեցաւ եւ ուստի չընդունեց Աստուծոյ արդարութեան ուղի (Հո 10.3), որ Քրիստոսի հաւատալուն մէջն է (հմմտ Հո 9.30), եւ որ հիմն է «Աստուծոյ ճշմարիտ ծանօթութեան» (Հո 10.2):

Կոչումին ետ առնուելը եւ տրուելը անոնց՝ որոնք զԱստուած չէին փնտներ

եւ Աստուծոյ չէին հետաքրքրուեր (հմմտ Ես 65.1)՝ արդեօք երբայեցի ժողովուրդը մերժելու արա՞րք էր:

Պողոս առաքեալ կ'ըսէ. «Բնա՛ւ երբեք» (Հո 11.1): Եւ կը բացատրէ. «անոնց յանցանքը պատճառ եղաւ, որ Աստուած փրկութիւնը հեթանոսներուն ղրկէ, որպէսզի անոնց նախանձը գրգռէ: Բայց եթէ անոնց յանցանքը պատճառ եղաւ որ աշխարհը Աստուծոյ շնորհքովը հարստանայ, այսինքն՝ անոնց նուաստացումը պատճառ եղաւ, որ հեթանոսները Աստուծոյ շնորհքով հարստանան, ո՛րքան աւելի մեծ պիտի ըլլայ բարիքը՝ երբ անոնք բոլորը հասնին փրկութեան» (Հո 11.11-12):

Եւ Աստուած ընտրեց իր նոր ժողովուրդը՝ անիկա՝ որ «Քրիստոսի մարմին»ն է, այսինքն՝ եկեղեցին: Անոր հետ նոր Ուխտ կնքեց՝ Քրիստոսի միջոցով:

Թէ՛ անհատ հաւատացեալը եւ թէ՛ եկեղեցին պէտք է գիտնան Աստուծոյ «բարութեան արժանի մնալ», այլապէս իրենք ալ կը կտրուին այն «ճիւղերուն» պէս, որոնք «կտրուեցան՝ որովհետեւ չհաւատացին» (տե՛ս Հո 11.20, 22):

Եւ ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ «բարութեան արժանի մնալ»:

Ապրիլ՝ Անոր ծառայելով, այսինքն աշխարհի վարձունքը չընդօրինակելով, ըլլալով նոր, որ ըսել է՝ ընտրելով լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը (հմմտ Հո 12.2):

Ընտրուած անհատը եւ ընտրուած եկեղեցին միշտ Աստուծո՛յ կամքին կը ծառայեն եւ ո՛չ թէ «խաբուսիկ ցանկութիւններ»ու: Անոնք կ'ապրին «ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփ 4.24):

Թէ՛ անհատ հաւատացեալը եւ թէ՛ եկեղեցին պէտք է գիտնան Աստուծոյ «բարութեան արժանի մնալ»



ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Հրագրաբար, 01 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրթար, 04 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 08 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրթար, 11 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 15 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրթար, 18 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 22 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրթար, 25 Հոկտեմբեր 2009

ԳԻՏ ՍՈՒՐ ՍԱՋԻ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 29 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրթար, 01 Նոյեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն


11.00 Ս. Պատարագ

Լոյս տաւ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I

DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par

Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԼՎԱՐ՝ ՁՐԻ
ԱՏԱՆՎՈՒ ԼՎԱՐ
ԿՐ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՐ ԱԵՐԿԱՅԱՆԱԼ
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԳՐԱՏԵՆԱԿ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՐ Ե-ԱՄԱԿՈՎ ԱՏԱՆՎՈՒ
ԼՎԱՐ ՁԵՐ Ե-ԼՎԱՅԷՆ ՈՒՊՈՐԿԵՅԷ
eglise58@sourphagop.com-ը

ՆԱԽՈՐԴ ԹԻՒԵՐՈՒ ԿՐՆԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ